ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2020 թվականի N 18-Ա

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 23/11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով և 3-րդ մասով, Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անվանացանկում և հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին» թիվ 23/11 որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Գլխավոր քարտուղարի օգնական» և դրան հաջորդող «ԸՆԴԱՄԵՆԸ» տողերում «2» թիվը փոխարինել «1» թվով,

2) «V ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գլխի «Խորհրդական» տողում «1» թիվը փոխարինել «3» թվով, իսկ դրան հաջորդող «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «8» թիվը՝ «10» թվով,

3) «VIII ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գլխի «Խորհրդական» տողում «2» թիվը փոխարինել «3» թվով, իսկ դրան հաջորդող «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «10» թիվը՝ «11» թվով,

4) «ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գլխի «Խորհրդական» տողում «7» թիվը փոխարինել «6» թվով, իսկ դրան հաջորդող «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «16» թիվը՝ «15» թվով,

5) «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ» գլխից հանել «Խորհրդական» բառը և «1» թիվը, իսկ դրան հաջորդող «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «5» թիվը փոխարինել «4» թվով:

2. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անվանացանկում և հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին» թիվ 23/11 որոշման թիվ 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) ուժը կորցրած ճանաչել թիվ 2 հավելվածի 17-րդ, 124-րդ և 129-րդ կետերը,

2) թիվ 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 61.1-ին, 61.2-րդ և 90.1-ին կետերով.

«61.1. Խորհրդական

61.2. Խորհրդական

90.1. Խորհրդական»:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ